63. ՇԱՆ ԼԱԿՈՏ ԲԵՐՈՂ ՊԱՌԱՎ*

Կէղնի, չէղնի ախչիկըմ ու տղե մը. ըտ տղեն ըտ ախչկա վրեն սավ-տալու կէղնի։

Ըտ ախչիկ չտվին ըտ տղին։ Սորա ուրիշ տղե մը տվին։ Ըտ տղեն էր, մարախ էրեց, քընի գնաց, ետ գնաց։

Սորա կիգա ըտ տղեն պառավու մը ըռաստ։ Պառավ կըսե տղին.— Տղա՛, քըզի ըտ ի՞նչ է ձեռք տվի, օր քընձ զօր ետ կէրթաս։

Կըսե.—Նանե, իմ դարդից վազն արի, ֆլան ախչկա վրեն սավտալու ենք, ինձի չտվին, էղա ըտհըմալ։

— Է,— կըսե,— օր ըտհըմալ է, ի՞նչ կիտաս ընծի, օր քու դարդին դարման էնիմ։

— Քըզի կիտամ հինգ օսկի, օր իմ դարդին դարման էնիս։

Սորա պառավ կըսե.—Տղա՛, ես հընտե կէլնամ կէրթամ, քու դարդին դարման պըտ էնիմ։

Պառավ կէլնա կէրթա, կառնե էրկու հատ շան լակոտ ու կէրթա ախչկա տուն։

Զդուռ կղըրկե, կըսե.—Ախչի, ախչի, զիս ստ հ'ըսօր ներս հըր լուսուն։ Լուսուն կէլնամ կէրթամ։

Ախչիկ լե կառնե ներս։

Ներս օր կառնե, ըտ պառավ զուր մոտի էրկու շան լակոտներ կտնե իր ծոծք, կթողե ուր ծծերու վրեն, կծծին։ Զըտ բան օր կտեսնա ախչիկ,

* Գրված է կես սասնա լեզվով (Ս. Բ.)։

կըսե.—Քա պառավ, ըտ ի՞նչ է կէնիս, օր ես գինեք տու ըտհրմալ մըռտալ բան կէներ, զքըզի ներս չընք առնե։

Պառավ կըսե.— Լաո, տը թողե, ըտի իմ մեղքն է, օր կքաշիմ։

Ախչիկ լե կըսե.— Պառավ, ըտ ի՞նչ մեղք է, ընծի ըսե, օր ես լե գինամ, բըլքեմ քու զարդին դարման էնիմ։

Կըսե.— Լաո, ես լե քու պես ախչիկ մ' ենք։ Տղե մը սավտալու էր իմ վրեն, ըմա իմ պապն ու մամ չըտվին զիս ըտ տղին։ Ըտոր վրա աստված ըղտա բան հանեց իմ գլուխ։ Ըղտա էրկու ջան լակոտ թողեց իմ էրեսնվե։ Ըտ բան տղի անեծքն էր, օր էլավ իմ գլուխ։ Էլ երեսս չբռնե, օր էլնամ իմ տրկեցի առջև։

Ախչիկ լե, որ կարգուկ էր ուրիշ տղի մը հետ, հրտ լսելուն՝ զբռանկ թալեց։

Պառավն օր տեսավ նորհարս զբռանկ թալեց, ըսավ.—Ախչի, լաո, ըտ հ'որի՞ զքու ըռանկ թալեցիր։

Կըսե.— Քու մոտեն ի՞նչ պահիմ։ Ընա մարդու տղեն իմ վրեն սավտալու էր, ըմա իմ պապ ու մամ զիս չտվին ըտ տղին, վրխնամ իմ գլուխ լե հրմլա բաներ էլնա։

Կըսե.—Լաո, օր հրմալ է, ըտ տղի հետ գնա, օր ըտ խատից փըրծնաս, ըտ մեղքեն. օր չէղնի դրացու հ'առեջ, քու ազգականի հ'առեջ էղնիս իրեսծեծանք։

Ախչիկ կըսե.—Գինա՞ս, մերիկ, ըտ տղեն հ'առեջ զիս ջատ կուզեր, հրմալ օր իմ արևով կերտրվներ։

Կըսե.— Հրմալ է, գնա, լաո, խոսա իրեն, թող հ'իգա քու խեչ։

Կըսե պառավն.— Օր հրմալ է, ես քու խաթրի համար կէրթամ զինք կտեսնամ։ Ցուցու ընձի զտղի տուն, չէղնի օր դու լե իմ ավա էղնիս, ես կճամբըցում, կիգա քու խեչ։

Կըսե.—Իմա՞լ էնիմ օր զտղեն բերիմ իմ խեչ։

Կըսե.— Դու զհիվընդությունառ քու վրեն, պառկի։ Եր օր քու իրիկ էկավ, ըսե ուրեն. «Ես էրազըմ տեսա օր մարդըմ էրկնուց հ'իջավ, ըսեց ընձի՝ «Զքըզի է ըս ինչ թըղու պառավ կրնա սախցու, ընի աղեկ տոխթոր է, ընի օր չիդա քու վրեն, տու կմեռնիս»։

Ախչիկ լե իմալ օր պառավ կըսե, հրմալ կէնե։

Հ'իրկուն օր կէղնի, մարդն կիգա, կտեսնա օր ուր կնիկ պառկուկ է։ Իմալ օր պառավ թարիֆ կէնե նորհարսին, հարս լե հրմալ կըսե ուր իրկան։

Իրիկն է, հրմա օր լսեց զրտ բան, վազեց, գնաց պառվու տուն։ Զբրկեց զդուռ։ Պառավ էլավ բացեց զդուռ, ըսեց.—Ի՞նչ է, հ'որի՞ կգբրկիս զդուռ։

Կրսե.— Քու ասու սիրուն, իմ կնիկ հիվանդ է, էրազ է տեսի օր հեքիմներ չըն կրնա սախցու, զքըզի է ցուցուցի։

— Օր ըտ հըմալ է, մրկա ես չըմ կրնա հ՝իգա, լուսուն էկո, ես դեղ ու դարման կշինեմ, կէլնանք կէրթանք։

Լուսուն օր կէզնի, իրիկ շուտ կէլնա, կէրթա պառվու տուն։ Պառավ լե զդեզեր կիտա մարդու ձեռք ու կէլնան հ՝իրարու հետ կիգան ըտ մարդու տուն, կնկա խեչ։

Պառավն օր կտեսնա զկնկա հիվանդութեն, կրսե կնկա մարդուն.— Հ՝իդա դեղեր զքու կնիկ չըն սախցու, հ՝իդա քաղքի մեջ լե ըտ դեղրնքներ իսկի չկա, մինակ Եմինու քաղքի մեջ կրնաս գտնալ։ Քսան ավուր ճամբա էրթալն է, քսան ավուր լե հ՝իգալն է։

Իրիկ կրսե.— Պառավ, ըդ խըտար ավուր մեջ օր ես էրթամ ու հըրի հ՝իգամ, իմ կնկան բանըմ չէղնի՞։

Կրսե.—Քառսուն, քառսուն էրկու ավուր մեջ բանըմ չէղնի։ Օր գացիր, զդեղ բերիր, կսախցում զքու կնիկ։

Լուսն օր կէղնի, մարդն է, կառնե զիր փետ, կընկնա Եմենու ճամբեն։

Կնկա իրիկ թըղ էրթա ուր ճամբուն։

Պառավ կէլնա, կէրթա, կառնե զտղեն, կբերե նորհարսի խեչ ու կէրթա ուր տուն։

Պառավն օր կէրթա, նորհարսն ու տղեն կփակին զդուռ, կուտին կխմին ու հըրի լուս զուրանց քեֆ կէնին։

Դառնանք տղի վրեն։ Տղեն է, տասնուհինգ ավուր ճամբա կէրթա, ըռաստ կիգա շարշու մը։

Ջարշին կրսե.—Տղա, հ՝ու՞ր կէրթաս, ըտհըմալ քու մատեն էնուկ է։

Կրսե.— Գործ ունիմ, կէրթամ Եմեն։

Կրսե.— Հ՝որի՞ կէրթաս, հըլպըթ ի՞նչ կա։

Կրսե.— Ճանըմ, իմ դարդից վազ կեցի։

Կրսե.— Քու դարդն ի՞նչ է, ըսե ընձի, քու դարդին բըլքիմ ես բան մը էնիմ։

Կրսե.— Իմ դարդ իդա է, իմ կնիկ հիվանդ է, կէրթամ Եմեն, դեղ բերիմ։

Կրսե.— Լաո, դու էկո ընձի լսե, դու ըոզու խաբած իս, էկո դարձի, էրթանք քու տեղ։ Քու կնկան սիրական կա, զքըզի խաբեր է, ճամբըցի հեռու։ Էրթանք, տեսնանք օր հըմալ չէղավ, թքո իմ էրես, օր հըմալ էղավ՝ խոսք տուր, օր զէրկուս լե սպանիս քու ձեռքով, ընձի ախչիկըմ կա, իտամ քըզի։

Ըտ շարշին էր, փոխեց զմարդու խըլըղ, հ՝ընկան ճամբա։ Էկան հասան ուրանց տեղ։ Ջարշին զըրկեց զդուռ, ըսեց.—Զդուռ բացեք, հ՝ըսօր

զմրզի մսաֆրը առեք, խեղճ մարդ ինք, լուսուն կէլնանք, կէրթանք։

Նորհարս կըսէ.— Դու ո՞րն իս, օր զդուռ բանամ քըզի։

Կըսէ.— Ես չարչի եմ, բաց դուռ, հ՝ըսօր ես ու իմ տղեն սրթըրվինք հ՝ոդի, վաղ էրթանք։

— Ի՞նչ ունիս ծախու, օր դու չարչի իս։

— Խնձոր, չամիչ, մանդր-մունդր բաներ։

Նորհարս լէ զդուռ կբանա, կառնէ ներս։

Չարչին կքաշէ զուր իշուկ, կտանէ ախոռ, կկապէ, կդառնա կիզա տուն։

Կնիկ կըսէ.— Գնա, է՛, ինա քոշեն նստի, դու, քու տղեկիկ։

Սորա կիգա կնիկ կհարցու.— Իմա՞լ կիտաս զխնձորի ու չամչի նուկին։

Կըսէ.— Բազար մը պըտ էնիմ քու հետ, իմալ օր տվիր։

Կառնէ նուկի մը չամիչ, մեկ լէ խնձոր, կէրթա, սիրականի խեչ, կնստին, կուտին։

Սորա չարչին գողտուկ կըսէ տղին.—Իմալ է, իմ խոսք չէլա՞վ։

— Հա, վոլա, քու խոսք հ՝ելավ։

Կըսէ.— Տե օր հըմալ է, տ՝էլի, սպանե զէրկուս լե։

Տղեն կէլնա, չարչին լե հետ կէրթա, կօգնե, զէրկուս լե կսպանին։

Օր կըսպանին թըմին, չարչին մարդ կճամբըցու, զուր ախչիկ կբերե, պսակե տղի վրեն։

Կերանք խմեցինք, զխերն հիշեցինք։